Պարոն/Տիկին _____ ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ.Մեսրոպյան _____

«18» 12 2024.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Գործուղվող անձանց անունը, ազգանունը՝**
- Կամո Սարգսյան,
- Դավիթ Մուրադյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ,
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ 2024 թվականի դեկտեմբերի 10-11-ը, Բելգիայի Թագավորության քաղաք Բրյուսել:

4. Հրավիրող կողմը՝ Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիա (WAREG):

5. Գործուղման նպատակը՝ Մասնակցել Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիայի 33-րդ լիագումար նիստին:

6. Քննարկված թեմաները՝ Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիայի հերթական լիագումր նիստի ընթացքում ընտրվեցին ասոցիացիայի նոր նախագահ և փոխնախագահներ, ինչպես նաև քննարկվեցին ջրի ոլորտում առկա մարտահրավերները: Նոր նախագահ ընտրվեց Պորտուգալիայի Ջրի և թափոնների ծառայությունների կարգավորող մարմնի (ERSAR) նախագահ Վերա Էյրոն:

Մասնավորապես, ներկայացվեցին ասոցիացիայի աշխատանքների արդյունքները, նախորդ տարիների կատարված աշխատանքները, ընդգծվեց ջրի ոլորտում, որպես խոշոր էներգատար ոլորտ, էներգախնայողության կարևորությունը: Ընդ որում, նշվեց, որ ջրային ոլորտը ավանդական էներգախնայողությունից պետք է անցում կատարի դեպի «կլիմայական չեզոքություն» (climate neutrality), և դիվերսիֆիկացնի իր էներգամատակարարման աղբյուրները՝ հատուկ ուշադրություն դարձնելով սեփական կարիքների բավարարման նպատակով էլեկտրաէներգիայի արտադրությանը: Անդամ երկրներից մի քանիսը նշեցին, որ դա որպես կարևորագույն սկզբունք ամրագրված է իրենց կանոններում, և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի իրականացման շրջանակում պարտադիր կատարման ենթակա բաղադրիչ է:

Մասնակից մի քանի երկրներ կիսվեցին իրենց փորձով ջրամատակարարման ոլորտում սակագների սահմանման մեթոդիկաների առնչությամբ, ներկայացվեցին սակագնի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնները և այդ գործոնների հարթեցման հնարավորությունները: Հատուկ շեշտվեց «խթանիչ» (incentive based) սակագնային մեթոդիկաների սահմանման կարևորությունը և ընկերությունների համար կատարողական ցուցանիշների սահմանումը, ինչը հնարավորություն է տալիս դրդել վերջիններիս ներդրումներն ուղղել սպասարկման որակի բարելավմանը, էներգախնայողության ծրագրերի իրականացմանը և ջրամատակարարման տևողության ավելացմանը:

Կարևորվեց շարունակական ներդրումների իրականացումը և պետության ու կարգավորողի դերը դրանում, հաշվի առնելով, որ ջրային ոլորտը ավանդաբար չի համարվում գրավիչ ոլորտ ներդրողների համար: Որպես լավ կարգավորման օրինակ շեշտվեց վերը նշված սակագնային մեթոդիկաների սահմանման հնարավորությունը, ինչի պարագայում կատարողական ցուցանիշներին հասնելու դեպքում ընկերությունը ստանում է լրացուցիչ օգուտներ:

Ելույթ ունեցան նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք ներկայացրեցին, թե ինչ նախադրյալների առկայության պարագայում են պատրաստ համաֆինանսավորել ջրային ոլորտում ներդրումները: Մասնավորապես, որպես կարևոր գործոն նշվեց թափանցիկ կարգավորումների և ծախսերի վերադարձման սկզբունքների առկայությունը:

Ներկայացվեցին ջրային համակարգերի կառավարման իրենց երկրների փորձերը՝ կոնցեսիա, կառավարում և այլն: Հատուկ ընդգծվեց անդամ երկրների շարունակական շփումների և փորձի փոխանակման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով խմելու ջրի՝ որպես մարդու կենսագործունեության կարևորագույն բաղադրիչ լինելը:

7. Հանդիպումները, ելույթները՝ Հանդիպումներ են կայացել ասոցիացիայի անդամ հանդիսացող երկրների պատվիրակների հետ, ինչպես նաև ասոցիացիայի նախկին և նորընտիր նախագահի և փոխնախագահների հետ: Հանդիպման ընթացքում քննարկված նյութերը հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://www.wareg.org/33rd-general-assembly-brussels/:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները՝ Հանդիպման ժամանակ հանձնաժողովը առաջարկեց 2025 թվականի հոկտեմբեր ամսին հյուրընկալել ասոցիացիայի լիսագումար նիստը Երևան քաղաքում, ինչը ողջունվեց ասոցիացիայի ղեկավար կազմի և քարտուղարության կողմից: Նշված համատեքստում հանձնաժողովը աշխատանքային կարգով կքննարկի նիստի անցկացման հնարավորությունը ասոցիացիայի ներկայացուցիչների հետ:

Կամո Սարգսյան ---------- 18.12.2024թ ----------
(ստորագրությունը, ամսաթիվը)

Դավիթ Սուրադյան ---------- 18.12.2024 ----------
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 1271-ՀՆ,1272-ԳՔ, 04.12.2024թ. Լրացում Հրաման 1326-ՀՆ,1325-ԳՔ, 13.12.2024թ**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Կամո Սարգսյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ՝ **Դավիթ Մուրադյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Բրյուսել /Բելգիայի Թագավորություն /**

5. Գործուղման ժամկետները **09.12.2024-13.12.2024 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Կամո Սարգսյան	Դավիթ Մուրադյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)	21,069	21,069	42.138
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	421,384	421,384	842.768
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	206	206	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը	3	3	
	Ընդամենը (դրամ)	255,283	239,471	494.754
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո և դոլար)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը	5	5	
	Ընդամենը (դրամ)	242,935	242,935	485.870
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			-
	Այլ ծախսեր (ճանապարհածախս եվրո)	8,923	8,923	17.846
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		949,594	933,782	1,883.376

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 20.12.2024թ.